

Հաստատում եմ
Տնօրեն ~~Գ. Պետոյան~~
----- 2023 թ



**ՈԼՍՈՒՄՆԱԿԱՆ հաստատության
դասարանի ղեկավարի աշխատանքային
տարեկան ծրագիր
ՀՀ Շիրակի մարզի ՀՀ ԿԳՄՍՆ Գյուլմրու
«Ֆոտոն վարժարան» ՊՈԱԿ
VIII Բ դասարան
Դասղեկ Ն. Մարտիրոսյան
2023-2024 ոԼՍտարի**

**Կրթական դաստիարակչական աշխատանքների
հիմնական ուղղությունները**

1. Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը).

2020-2021 ուստարում ստանձնել եմ VIII F դասարանը, որը բաղկացած է 24 աշակերտներից՝ 11 տղա, 13 աղջիկ:

2. Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում.

Ուսումնադաստիարակչական աշխատանքները տարվա ընթացքում պետք է նպաստեն ուսման որակի բարձրացմանը, ուսման առաջադիմության ապահովմանը և համակողմանի զարգացած մարդու ձևավորմանը: Քանի որ նրանց մոտ ձևավորվում է հիմք հետագայի համար, դրա համար պետք է աջակցել նրանց, օգնել: Ուսումնական տարվա ընթացքում դասարանում ձևավորել մի միասնական կազմակերպված հանրույթ: Ուսումնադաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) :

3. Հայեցի դաստիարակություն.

3.1 Հոգևոր դաստիարակություն. Դաստիարակչական աշխատանքները պետք է կազմակերպվեն այնպես, որ աշակերտները բացի առարկայական գիտելիքներից զինվեն նաև հոգևոր գիտելիքներով: Աշակերտի մոտ ձևավորել համամարդկային և քրիստոնեական արժեքներ: Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

3.2 Գեղագիտական դաստիարակություն.

Ձևավորել աշակերտի մոտ գեղագիտական ճաշակ: Դասղեկի ժամերին տալ հարուստ գիտելիքներ արվեստի մասին, որ երեխան կարողանա տեսնել և գնահատել գեղեցիկը և բարին:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն.

Աշակերտի մեջ սեր արթնացնել դեպի հայրենիքը: Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ : Նշել մի շարք ֆիդայիների անուններ և թվարկել այն բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստ ձևերը:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն.

Հոգ տանել աշակերտի առողջության մասին: Ջրույց վարել աշակերտի հետ, թե ինչ դեր է խաղում սպերտը մարդու կյանքում:

3.5 Աշխատանքային դաստիարակություն.

Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը, որ կարողանա գոյատևել ներկայիս դժվար պայմաններում:

3.6 Բնապահպանական դաստիարակություն.

Ձևավորել աշակերտի մեջ սերը դեպի բնությունը: Կարևորել բնապահպանական դաստիարակությունը:

Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ, որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրը գլոբալ է:

3.7 Դպրոց-ընտանիք կապը.

Կրթադաստիարակչական բոլոր աշխատանքները ճիշտ կընթանա եթե գերծի դպրոց-ընտանիք կապը: Անցկացնել ծնողական ժողովներ, ունենալ զրույցներ ծնողների հետ: Երեխաները պետք է հասկանան,

որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը:

Մինևույն ժամանակ գիտակցեն, որ պետք է սերտ կապի

մեջ պահեն դպրոց-ընտանիք կապը, որպեսի աշակերտները ավելի լավ սովորեն:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը

Ուս Շ.	Ուսումնակադաստ. աշխատ. բովանդակությունը	Կ. Ժ.	Կատ արող ներ
1	2023-2024 ուստարվա անելիքների քննարկում: Ընտրել դասարանի ավագ:		Դասղ եկ / դասա րան
2	Ազնիվ դասարան ու անկեղծ հարաբերություններ մեր դասարանում		
3	Ովքեր են իմ ընկերները, ինչ եմ կարևորում ընկերության մեջ:		
4	Ջրույց <<Անկախ Հայաստան >> թեմայով		
5	<< Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում>>		

6	Ո՞ր մասնագիտությունն է ինձ դուր գալիս և ինչ՞ու:		
7	Հայկական ավանդույթներ :		
8	Իրավունք և պարտականություն:		
9	Վարվեցողության կանոններ:		
10	<<Քանի լեզու գիտես այնքան մարդ ես>> թեմայով զրույց:		
11	<< Պետական խորհրդանիշներ>> թեմայով զրույց:		
12	<<Բնական պաշարներ>> թեմայով քննարկումը կձևավորի գիտելիքներ արդյունաբերության տարբեր ոլորտների վերաբերյալ:		
13	Պատի թերթի լույս ընծայում <<Ուրախ դիմավորենք Ամանորը>>:		
14	Հայաստանը թափառող մայրաքաղաքների երկիր:		
15	II կիսամյակի անելիքների քննարկում:		
16	Հայոց բանակի տոնը:		
17	Վատ սովորույթներ:		
18	Առողջ ապրելակերպ:		
19	Ընկերություն և բարեկամություն:		
20	<< Էկոլոգիական հիմնախնդիրներ >> : Աշակերտներին հանձնարարել հավաքել տեղեկություններ Հայաստանի Հանրապետության ավելի ուշագրավ էկոլոգիական խնդիրների մասին:		
21	Զրույց<< Մայրության և գեղեցկության >> մասին:		
22	Ուզում եմ ունենալ պետությւն որտեղ.....		
23	Արդարացի և անարդար արարքներ:		
24	Իմ կատարած լավ գործերը:		
25	<< Բնական աղետներ >> ներկայացնել բնական աղետների առաջացման պատճառները և դրանց հետևանքները:		
26	Մոք կերպարը:		

Անցկացման օրը, ամիսը, տարին	Անցկացվող միջոցառման բովանդակությունը	ծանոթություն

**ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱԿԱՐԻ ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԴԺԿԱՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՎՈՂ, ՍՈՑԻԱԼԱԴԵՍ
ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ԿԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԱՃԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ**

անց. ժ.	աշ. անուն, ազգ., հայրանուն	աշխատանքների համառոտ բովանդակությունը	աշխատանքների արդյունքները	Լրաց. լեղեկ.
			-	

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱԿԱՐԻ ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐԸ

Օրը, ամիսը, տարին	Առարկան և դաս. Ուսուցիչը	Դասի թեման	Նպատակը

